ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Մեծավան համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Մեծավան	Ավագանու հերթական նիստ	19.03.2021թ.	14-00	**Մեծավանի** համայնքապետարան գ.Մեծավան Զ.Անդրանիկի 2

ՕՐԱԿԱՐԳ

2021թ. մարտի 19-ին Մեծավանի համայնքապետարանում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

ժամը՝ 14-00

1. Մեծավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 19-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Հ. Քաչակույան

2. Մեծավան համայնքի ավագանու 2021թվականի փետրվարի 19-ի թիվ 11-Ա, 12-Ա և 13-Ա որոշումները անվավեր ճանաչելու մասին

զեկ. Հ. Քաչակույան

3. Մեծավան համայնքի բյուջեից Մեծավանի «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին դրամաշնորհ հատկացնելու մասին

զեկ. Ա. Վարդանյան

4. Մեծավան համայնքի ավագանու 2018թվականի մարտի 30-ի «Մեծավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Հ. Քաչակույան

5. 2020թվականի հոկտեմբեր ամսին ձեռք բերված գույքը համայնքային սեփականություն գրանցելու մասին

զեկ. Հ. Քաչակույան

6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից վարձակալության իրավունքով տրամադրելու մասին

զեկ. Ա. Վարդանյան

7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդային կարգով օտարելու մասին

զեկ. Տ.Խաչատրյան

8. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

զեկ. Հ. Քաչակույան

ՆԱԽԱԳԻԾ 18-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՀԱՅԱՐՓԻ ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Մեծավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 19-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Մեծավան համայնքի ավագանու 2021թվականի փետրվարի 19-ի թիվ 11-Ա, 12-Ա և 13-Ա որոշումները անվավեր ճանաչելու մասին
3. Մեծավան համայնքի բյուջեից Մեծավանի «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին դրամաշնորհ հատկացնելու մասին
4. Մեծավան համայնքի ավագանու 2018թվականի մարտի 30-ի «Մեծավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
5. 2020թվականի հոկտեմբեր ամսին ձեռք բերված գույքը համայնքային սեփականություն գրանցելու մասին
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից վարձակալության իրավունքով տրամադրելու մասին
7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդային կարգով օտարելու մասին
8. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

ՆԱԽԱԳԻԾ 19-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 11-Ա, 12-Ա և 13-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՀԱՅԱՐՓԻ ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2021թվականի մարտի 03-ի թիվ 01/107.3/01576-2021 գրությունը՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Անվավեր ճանաչել Մեծավան համայնքի ավագանու 2021թվականի փետրվարի 19-ի ««Մեծավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 56-Ա որոշման N2 հավելվածում փոփոխություն կատարելու մասին» թիվ 11-Ա որոշումը:
2. Անվավեր ճանաչել Մեծավան համայնքի ավագանու 2021թվականի փետրվարի 19-ի «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի «Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 58-Ա որոշման հավելվածում փոփոխություն կատարելու մասին» թիվ 12-Ա որոշումը:
3. Անվավեր ճանաչել Մեծավան համայնքի ավագանու 2021թվականի փետրվարի 19-ի ««Մեծավանի համայնքապետարանին ենթակա ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 57-Ա որոշման N2 հավելվածում փոփոխություն կատարելու մասին» թիվ 13-Ա որոշումը:

ՆԱԽԱԳԻԾ 20-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՄԵԾԱՎԱՆԻ «ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18.հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37. հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Մեծավան համայնքի բյուջեից Մեծավանի «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին հատկացնել 640000/վեց հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ՝ ազոտական գութան ձեռք բերելու համար:
2. Ուժը կորցրած ճանաչել Մեծավան համայնքի ավագանու 2021թվականի սեպտեմբերի 14-ի « Մեծավան համայնքի բյուջեից Մեծավանի «Արոտօգտագործողների միավորում» ապառողական կոոպերատիվին դրամաշնորհ հատկացնելու մասին» թիվ 40-Ա որոշումը:

ՆԱԽԱԳԻԾ 21-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի՝
«ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ և
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 10-
Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՀԱՅԱՐՓԻ ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Մեծավան համայնքի ավագանու 2018թվականի մարտի 30-ի «Մեծավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 10-Ա որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետ՝ Արմեն Յավրումյան - ՀՈԲ տեսուչ, ոստիկանության լեյտենանտ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ Արտյոմ Այվազյան- ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի ԱԳ և ԸԲԿԲ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ -Արտյոմ Այվազյան բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 22-Ա

2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ
ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՀԱՅԱՐՓԻ ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. 2020թվականի հոկտեմբեր ամսին ձեռք բերված հետևյալ գույքը գրանցել որպես համայնքային սեփականություն՝
   1) Ինքնաթափ ԿԱՄԱԶ-6520-041
   2)Հացահատիկային կոմբայն՝ հնձիչով- Ս300 ՆՈՎԱ-340ԱՏԳ, Տ300.27 ԱՏԳ
2. Նշված գույքը գրանցել համայնքի սեփականություն համարվող գույքի գրանցման մատյանում:

ՆԱԽԱԳԻԾ 23-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, Մեծավան համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Մեծավան համայնքի վարչական տարածքում՝ Մեծավան գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-074-0249-0021 ծածկագրով 27,66996 հա վարելահող, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 166019 ՀՀ դրամ և Ձյունաշող գյուղում 06-064-0118-0036 ծածկագրով 50.972 հա խոտհարք, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 150000 ՀՀ դրամ 25 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության:
2. Մրցույթի մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել վարձակալության իրավունքով տրամադրվող հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՆԱԽԱԳԻԾ 24-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. *ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ և 68-րդ հոդվածներով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով,հաշվի առնելով Մեծավան համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն՝ Մեծավան համայնքի վարչական սահմաններում գտնվող Մեծավան համայնք գյուղ Մեծավան Դաշտամիջյան փողոց 1 հողամաս հասցեում 06-074-0251-0124 ծածկագրով 15,5373հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության հողամասը 22373712 ՀՀ դրամ մեկնարկային գնով, աճուրդ վաճառքի ներկայացնելու:
2.Մրցույթի մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով՝ 1118685,6 ՀՀ դրամ:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդ վաճառքի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՆԱԽԱԳԻԾ 25-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՀԱՅԱՐՓԻ ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ*

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ինմասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածին, Մեծավան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 46-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: